

Յանկանում ենք եւ սրանց համար առողջ եւ յաջողակ կեանք, եւ յուսով ենք, որ յառաջ կտանեն ընկերութեան զործերը դէպի աւելի լաւութիւն ։

ԳԼԵՆՈՒԹԻՒՆ՝ ՍՂԿԱՅԻՍ՝ ՍԱՀԱԳԵԱՆ՝ ՀՈԳԵՒՈՐ ՈՒՍՈՒՄ՝
ՆԱՐԱՆԻ ՆԵՐԲԻՆ ԵՒ ԱՐՏԱԳԻՆ ԿԱԹԱՎԱՐՈՒԹԵԱՆ՝

• Իսկ որք մեղանքնն, առաջի ամենեցուն
յանդիմանեա, դի եւ ալլքն երկիցն • ։
(Տիմ. Ա. 91. Ե. ճմ. 20) •

Թէ մօրդ, թէ հասարակութիւն, թէ ամբողջ ազգ, միայն այն ժամանակ կարող է յառաջադիմութիւն ունենալ բարոյական, մտաւորական և նիւթական զարգացման կողմից, երբ կգտնէ մի այնպիսի ճանապարհ, որը տանում լինի ուղղակի դէպ ի նոյն նպատակը։ Մեր Ազգը արդէն գտել է այդ ճանապարհը։ Մենք արդէն համոզուած ենք, որ մեր սուրբ Եկեղեցւոյ հաստատութեան համար, մեր ազգութեան յարատեւութեան համար, մեր լիզուսի և մատենադրութեան մշակման և ծաղկման համար, մեր բարոյականութեան պահպանողութեան համար, մեր նիւթաւոր բարեկեցութեան համար, մեր մտաւոր զարգացման համար, մեր մասնաւոր բարօրութեան և երջանկութեան համար, հարկաւոր է մեզ ուսումն։

« Ուսում, ուսում, մեզ պիտոյ է, »

« Ուսումն է մեր թագաւոր. »

« Ուսմով միայն կարելի է »

« Երջանկանալ փառաւոր ։ »

Ասում է բանաստեղծը. և բանաստեղծները միշտ արձագանք են ժողովրդի ոգւոյ և ժամանակի պահանջման։

Եւ մենք ոչ միայն բաւականանում ենք լոկ համոզմունքով, այլ սկսում ենք իրագործել, մարմնացնել այդ համոզմունքը, որոյ ապացոյց են բազմաթիւ ազգային դպրոցները. . . .

Ահա լուսմեմ շատ ձայներ, որք բարձր աղաղակում են՝ « մի՛ խաբէք մեզ և ձեզ. մեր բոլոր ուսումնարանները և դպրոցները, բացի յոյժ սակաւ բացառութիւններից, գտանուում են թշուառ վիճակի մէջ, աններելի անկարգութեան և անյառաջողութեան մէջ. . . Մենք համաձայնութեան ենք. եւ արդարեւ անցաւ այն ժամանակը, երբ

թիւ ազգասիրութեամբ մոլուած, կամ լաւ առեւժնեւ անձնական փառասիրութեամբ յափշտակուած, մենք չէինք կամենում խոստովանել մեր պակասութիւնները։ Մեր դարը զործի փաստի, ապացոյցի դար է. »

Բայց՝ ո՞վ է յանցաւորը որ մեր ազգային ուսումնարանները և դպրոցները գտանուում են այդպիսի անգոհացուցիչ դրութեան մէջ. . . .

Ո՛հ, հարիւրաւոր, հազարաւոր բերաններ բացուեցան իսկոյն և խօսքս ընդմիջում են աղաղակելով՝ « Հոգեւորականներն են յանցաւոր, որովհետեւ նոցա իշխանութեան ներքոյ են և նոցա ձեռքով կառավարում մեր դպրոցները. . . »

Ներկե՛ք, մենք չենք համաձայնում. »

Ուրեմն եկէ՛ք քննել թէ արդեօք ճշմարիտ է և հիմնաւոր այդ կարծիքը, որը համարեալ թէ ընդհանրացել է ժողովրդի մէջ. »

Մի փոքր ազգ, ցրուած բոլոր տիեզերքի վերայ, անտէր, անփող, անզօր, անուսումն, յանձնել է իւր կեանքի ղեկը իւր հաւատարիմ ծառային, իւր արթուն հովուին, իւր բազմադարեան մտերիմ և ցաւակից բարեկամին — իւր հոգեւորականութեան. բայց սա՛ տգիտութեան և աղքատութեան մէջ ընկղմած լինելով ամբողջ ազգի հետ միասին՝ կարող է՞ր արդեօք զոհացուցիչ կերպով կատարել իւր վերայ բարգաժ ծանր և միանգամայն սրբազան պարտաւորութիւնները. նոյն իսկ այժմ ունի՞ նա միջոց և հնարք առ այն. ժողովուրդը ճանաչել է և որոշել է արդեօք թէ ի՞նչ փոխադարձ յարաբերութիւններ և պարտաւորութիւններ կան իւր և իւր հոգեւորականութեան մէջ. . .

Ընդհանուր պատմութիւնը բազմաթիւ օրինակներով ցուցանում է մեզ, որ իւրաքանչիւր ազգի քաղաքական կեանքի սկզբում մտաւոր զարգացումն սկսւում է նախ հոգեւորականութեան մէջ։ Արդէն ըստ իւր դրութեան և պաշտօնի հոգեւորականութիւնը պարտաւոր է լինել զրազեւ և իմանալ վարդապետութիւնը այն դաւանութեան, որոյ պաշտօնեայն է։ Եզդիպատի լուսաւորութիւնը նախ քուրմերի ձեռքին էր. Բարիլոնիւր և Ասորեստանիւր՝ Քաղդէացւոց (քուրմեր) ձեռքին. Հրէիցը՝ քահանայապետների և դպիրների ձեռքին. Հնդկացը և Չինացը՝ քուրմերի ձեռքին. Պարսիցը՝

մոգերի, ձեռքին, Յունացը, և Հռոմեացեացը՝ քուրմերի և պատգամախօսների ձեռքին, Քրիստոնէական վարդապետութիւնը նախ առաքելոց և նոցա աշակերտաց և հետեւող հոգեորականաց մէջ, Բայց հետզհետէ ժամանակի պահանջմունքով և հանդամանքների բերմունքով, մանաւանդ երբ բաց ի դարանական և աստուածաբանական գիտութիւններից ծագեցան և այլ գիտութիւններ, լուսաւորութիւնը սկսեց տարածուիլ և ժողովրդի մէջ։ Ներքն հոգեորականութիւնը, թէ՛ հինը և թէ՛ մանաւանդ քրիստոնէականը, ձեռնտու էր լինում այս բանին ուսումնարաններով և այլ միջոցներով։ Սակայն՝ որովհետեւ ժողովուրդը նախում էր գիտութեանց վերայ ոչ միայն ուսումնական, այլ մանաւանդ գործնական աչքով այն է՝ նոցա օգնականութեամբ բարեօրէիլ և դիւրացնել իւր կեանքը, և որովհետեւ ունէր իւր մէջ անարատ և բազմաբույս աղբիւր մտաւոր զարգացման, սկսաւ արագ քայլերով յառաջ գնալ լուսաւորութեան ճանապարհի վերայ։ Իսկ հոգեորականութիւնը հնասէր լինելով և փոքր ինչ երկիւղ կրելով արտաքին գիտութիւններից, աւելի մեծ համակրութիւն չէր ցուցանում սոցա, ուստի և բաւականին յետ մնաց լուսաւորութեան ասպարիզի վերայ։

Երբ Եւրոպայի տէրութիւնները նոր աչքով սկսեցին նայել իւրեանց պարտաւորութեանց և յարաբերութեանց վերայ դէպ ի ժողովուրդը, երբ նոքա հասկացան թէ տէրութեանական կառավարութիւնն է ժողովրդի համար և ոչ թէ ժողովուրդը կառավարութեան համար, սկսեցին նոքա որոնել զանազան միջոցներ ժողովրդի բարեկեցութեան համար, և ի միջի այլոց առանձին իմն ուշ դարձուցին նորա մտաւոր զարգացման վերայ, հետեւադէս և ուսումնարանների վերայ։ Լաւ իմանալով որ ոչ մի ազգ ոչ թէ չէ կարող մնալ առանց հոգեորականութեան, այլ թէ սա մեծ ազդեցութիւն ունի նորա կեանքի՝ ամենայն կողմերի վերայ, և տեսանելով որ հոգեորականութիւնը շատ յետ է մնացել լուսաւորութեան ճանապարհի վերայ, տէրութեանական կառավարութիւնները և ժողովուրդը առանձին ուշ դարձուցին հոգեորականների մտաւոր զարգացման վերայ, ուստի հաս-

տատեցան զիւղերում և քաղաքներում բազմութիւն ծխական դպրոցներ, հոգեւոր ուսումնարաններ (սեմինարիաներ) և աստուածաբանական գիտութեանց ձեմարաններ։ Եւ ահա այժմ բոլոր Եւրոպական ազգերի հոգեորականները եթէ գնալովն չեն ժողովրդի ուսումնական մասնից իւրեանց լուսաւորութիւնով, չեն և նուազ, և ոչ միայն աստուածաբանական գիտութեամբ ևն հարուստ, այլ և բազմատեսակ արտաքին գիտութեամբ ճոխացած։

Այժմ դառնալով դէպ ի մեր հոգեորականութիւնը՝ տեսնում ենք և բազմութիւն պատմաբանական փաստերով համոզում՝ որ սա ամենայն հաւանարմութեամբ կատարել է արդէն իւր պարտաւորութիւնը։ Ո՞վ հաստատեց, պայծառացրեց և պահպանեց մեր սուրբ եկեղեցին և լուսափայլ հաւատը, ո՞վ ստեղծեց, զարգացրեց և ծաղկեցրեց հայկական դպրութիւնը, ո՞վ մոզրեց սորա մէջ արտաքին գիտութեանց մասները, ո՞վ տարածեց ժողովրդի մէջ մասնաւոր լուսաւորութիւնը, ո՞վ պահպանեց, կարելի է ասել մեր լիզուն և աղբութիւնը, եթէ ոչ մեր քրտնաջան և բազմբախտ հոգեորականութիւնը։ Բայց վերջապէս սպասեցան բոլոր զօրութիւնները, հայկական լուսաւորութեան նաւը չկարողացաւ աւելի դիմանալ բազմադարեան քաղաքական ալեկոծութեան լիտնաբերձ կուտակներին և կործանիչ հարուածներին՝ հոգեորականութիւնը նուազեցաւ, թուլացաւ և անկաւ, անկաւ խորին տգիտութեան մէջ, անկաւ յետին աղքատութեան մէջ։

Փոխուեցան դերասանները, պէտք է փոխուին և զերերը։

Բազդատելով մեր հոգեորականութեան և ժողովրդի ներկայ վիճակը միմեանց հետ մենք պիտի համոզուինք որ ընդհանրապէս ժողովրդի վիճակը թէ՛ լուսաւորութեան, թէ՛ հարստութեան և թէ՛ բարեկեցութեան կողմից մի քանի անգամ լաւ է հոգեորականութեան վիճակից։ Բայց ի՞նչու ժողովուրդը չէ կամենում ճանաչել իւր զերը, ի՞նչու չէ կատարում իւր սրբազան պարտաւորութիւնը, ի՞նչու չէ հատուցանում պարտքի փոխարէնը, ի՞նչու չէ մեկնում եղբայրական սիրոյ և օգնութեան ձեռքը դէպ ի իւր հոգեորականու-

Թիւեր, ի՞նչու չէ հաստատում ազգային ուսումնարաններ, որոց մէջ պատրաստուէին թէ՛ քաղաքական գործակատարներ և թէ՛ արժանաւոր հոգեորականներ:

Իսրձեալ լսուեցան ձայներ, « Ժողովուրդը երբէք չէ խնայել և այժմ՝ ևս չէ խնայում իւր ազգասիրական նուիրարեութիւնները յօգուտ ազգային դպրոցների, բայց տեսնելով որ իւր տուածը անցնումէ շահասէր հոգեորականների ձեռքը և կորչումէ ապարդիւնաբար, նկատելով որ ոմանք առաջնորդներից անհոգատար են դէպ ի ազգային ուսումնարանները, ոմանք յաջորդներից անտարբեր են և անուշափր դէպ ի նոցա, քահանայք անուսումնասէր, յուսահատուել է նա և կորցրել ազգասիրական ջերմեւանդութիւնը . . . »:

Հոգեորականութիւնը ցաւօք սրտի լսումէ այդ և մասամբ իւր չամոգում և ընդունում, բայց պատասխանումէ « միթէ քիչ հարուստ աշխարհականներ կան որք խնայումեն մասն հանել ազգային ուսումնարանների համար, միթէ քիչ մարդիկ կան որ զիշեր ու ցերեկ աշխատումեն վնասել և կործանել եղած ուսումնարանները եսականութեան կըքով կուրացած. միթէ քիչ երեցփոխաններ կան որ կողոպտումեն եկեղեցեաց կարողութիւնը և զրկում նոցա միջոցից պահպանել իւրեանց գաւթներում ծխական դպրոցներ, միթէ քիչ տեսուչներ և վարժապետներ կան որ իւրեանց ծուլութեամբ ըմացնում են սրամիտ մանուկներին ընդունակութիւնները և երկար տարիներով յետադիմութեան ճանապարհի վերայ մղում իւրեանց խնամակալութեան յանձնած ուսումնարանները, միթէ քիչ հոգաբարձուներ կան որ կամ յափշտակումեն աղքատ դպրոցների վերջին կոպեկները և կամ իւրեանց մահապարտ անհոգացողութեամբ կործանում նոցա. միթէ . . . միթէ . . . »:

Եւ ո՛ր պիտի տանին զԱզգը և զեկեղեցին աշխարհականների Բայեօքը և հոգեորականների Բիւթեօքը . . . »:

Եթէ այժմ փոքր ի շատէ հոգացողութիւն ենք տեսնում մեր ազգային ուսումնարանների մասին՝ դարձեալ հոգեորականութեան կողմից է այդ, Հոգեւոր իշխանութիւնը՝ ըստ տէրութեան օրինաց

պարտաւոր գոյով հոգալ իւր կառավարութեան ներքոյ եղած ուսումնարանների վերայ՝ աշխատումէ իւր կարողութեան չափ ամենայն տեղ հաստատել և բարեկարգութեան ու յառաջդիմութեան մէջ պահել եկեղեցական դպրոցները. Համոզուած լինելով որ հոգեւոր դպրոցների և ուսումնարանների միատեսակ ընթացքի և կանոնաւոր զարգացման համար յոյժ օգտակար է և կարի հարկաւոր իւրաքանչիւր թեմում նշանակել վիճակային տեսուչներ, Հոգեւոր իշխանութիւնը որոնումէ նիւթաւոր միջոցներ, Աւհայառ Հայրապետը՝ զիշեր և ցորեկ հոգալով Ազգի բարօրութեան և եկեղեցւոյ պայծառութեան վերայ, առանձին իմն ուշադրութիւն և խնամք ունի ազգային ուսումնարանների վերայ, Կամենալով կանոնաւոր միակերպ ընթացք տալ նոցա՝ Նա պատուիրեց առանձին ուսումնական յանձնաժողովին յօրինել ծխական և վանական դպրոցների համար կանոնադրութիւններ, որ և տպուեցան իւր ժամանակ Արարտի մէջ ի գիտութիւն և ի հրահանգ ամենեցուն (*), Կամենալով խրախուսել և հրապարակական շնորհակալութիւն մատուցանել արիւնքան վարժապետաց և հաւատարիմ ու խնամատար հոգաբարձուաց՝ Նա պատուիրումէ միշտ տպել սոյն ամսագրի մէջ այլ և այլ ուսումնարաններու տարեկան հաշիւները ըստ ուսումնական և տնտեսական կառավարութեանց, Բայց մի և նոյն ժամանակ նորին Օծութիւնը միշտ նախանձախնդիր է և արդար վարձ հատուցանող այն տեսչաց, վարժապետաց և հոգաբարձուաց, որք ծուլութիւն, անհոգացողութիւն և անբարեմտութիւն են ցուցանում դէպ ի իւրեանց կառավարութեան յանձնած ուսումնարանը:

(Մասնակէտ է յետագային):

ՎԱՃԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՍՏԱՄԵԱՆՅՑ:

(*) Տես Աբաբաո 1868 — 69 ամի, Թիւ Ժ, Փետրուար, և 1869 — 70 ամի, Թիւ Ա, Մայիս: